



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ
ՎԱՐՉԱՎԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵՎԱՎԱՐԻ ՏԵՂԱՎԱԼ

« 07 » 08 2014 թ.

ք.Երևան, Ե.Ջարյան փ. 27

Հեռ. 28-40-99

N 25/01-14/45867

<<Բնապահպանական տեղեկատվության
հասարակական կենտրոն>> կազմակերպության
Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
պարոն Ս. Այվազյանին

Հարգելի պարոն Այվազյան

Հրազդանի կիրճի ձախակողմյան հատվածի բարեկարգման և սանիտարական վիճակի վերաբերյալ Երևանի քաղաքապետին հասցեագրած Ձեր 29.07.2014թ. հ. ԵՕԿ-14/11 գրության կապակցությամբ Արաբկիր վարչական շրջանի համապատասխան ծառայությունների կողմից տեղում ուսումնասիրվել է բարձրացված հարցը և, հաշվի առնելով Ձեր առաջարկությունները, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ:

Մասնավորապես մաքրվել է <<Տլորենսիա>> ռեստորանային համալիրից դեպի Արաբկիր զբոսայգի տանող առափնյա ճանապարհը և սահմանվել է ամենօրյա հսկողություն: Միաժամանակ միջոցներ են ձեռնարկվում սեղմ ժամկետում նշված հատվածում աղբամաններ տեղադրելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է վերը նշված տարածքում նստարաններ տեղադրելուն, ապա այդ հարցը նույնպես քննարկվել է և հնարավորության դեպքում լուծում կտրվի:

Ս. Միսկարյան